# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԲԱԶՈՒՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք, ԼՈՌՈՒ
ՄԱՐԶ ԳՅՈՒՂ ԲԱԶՈՒՄ 1 ՓՈՂՈՑ ԹԻՎ 2, Հեռ. (0322) 64109 ,
bazum.lori@mta.gov.am

N 016-38
*16 փետրվար 2017թ.*

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Կից ներկայացնում ենք Բազում համայնքի ավագանու 07-Ա և 08-Ն որոշումները:

Առդիր 4 էջ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԲԱԶՈՒՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 07-Ա

### ԹԻՎ 01 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14 հոդվածի 6-րդ մասով՝

Բազում համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Բազում համայնքի ավագանու թիվ 2 նիստի օրակարգը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄԻԽԱԿ
2. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՀԵ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ
4. ԾԱՏՈՒՐՅԱՆ ԵՐԵՄ
5. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՌԱԴԻԿ
6. ՕՍԻՊՈՎԱ ՍԻԼՎԱ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ԲԱԶՈՒՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 08-Ն

## ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 82-րդ հոդվածի 7-րդ մասով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, <<իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-ւդ մասով՝

Բազում համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Բազում համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը ՝ համաձայն հավելվածի:

2.Հաստատել 2016 թվականի բազում համայնքի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշետվությունը՝ համաձայն հավելվածի:

3.Սույն որոշումն օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներրորդ օրը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄԻԽԱԿ
2. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՀԵ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ
4. ԾԱՏՈՒՐՅԱՆ ԵՐԵՄ
5. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՌԱԴԻԿ
6. ՕՍԻՊՈՎԱ ՍԻԼՎԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԻՔՈՒՇ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Բազում համայնքի ավագանու
13.02.2017թ-ի թիվ 08-Ն որոշման

Բազում համայնքը հինգույն բնակավայր է: Այն տեղակայված է Բազումի լեռների ստորոտի հյուսիս արևելյան մասում, մարզկենտրոն Վանաձորից 8կմ հեռավորության վրա: Շրջապատված է Բազումի լեռներով. ծովի մակերևույթից բարձր է 1550մ:

| *Վարչական տարածքը հա* | *Գյուղնշանակության հողատարածք հա* | *վարելահող հա* | *խոտհարք հա* | *արոտ հա* | *այլ հա* |
|---|---|---|---|---|---|
| 4208,89 | 2814,58 | 210,99 | 373,16 | 1917,01 | 313,42 |

Համայնքն ունի 444 տնտեսություն, 1679 բնակիչ, որից մշտապես ներկա 1218 մարդ /624 տղամարդ, 594 կին/:
Համայնքի թոշակառուների թիվը կազմում է 171, նպաստառու ընտանիքների թիվը կազմում է 70:
Համայնքի աշխատունակ բնակչության թիվը կազմում է 860 մարդ, որից
գյուղատնտեսական ինքնազբաղվածություն 370 մարդ
պետական մարմիններում 10 մարդ
տեղական ինքնակառավարման մարմիններում 10 մարդ
մանկապարտեզում 5 մարդ
դպրոցում 16 մարդ
պայմանագրային զինծառայող 60 մարդ
մասնավոր սեկտորում 30 մարդ
չունեն զբաղվածություն 359 մարդ:

- 2016թ-ի ընթացքում գյուղատնտեսական արտադրանքի ծավալը

| *Գյուղատնտեսական արտադրանքի տեսակը* | *Ցանքատարածության չափը* | *Արտադրանքի քանակը* |
|---|---|---|
| կարտոֆիլ | 10,73հա | 900ցենտ. |
| բանջարեղեն | 0,36հա | 260ցենտ. |

Համայնքն ունի

| *Անասնատեսակ* | *գլխաքանակ* |
|---|---|
| Խոշոր եղջերավոր անասուններ | 354 |
| Մանր եղջերավոր անասուններ | 24 |
| թռչուններ | 540 |
| մեղվաընտանիքներ | 272 |

- Համայնքում գործում է միջնակարգ դպրոց, որտեղ սովորում է 150 աշակերտ:

Դպրոցն ունի 36 աշխատող:

- Համայնքում գործում է նախակրթարան, ուր հաճախում է 9 երեխա:
- Համայնքում գործում է մանկապարտեզ, ուր հաճախում են 20 երեխա:
- Համայնքում գործում է բուժկետ:

Համայնքն ունի մշտապես հասանելի պաշտոնական կայք, որը պարբերաբար թարմացվում է:

Համայնքի թույլ կողմերն են.

Խմելու ջրի բացակայություն
Ոռոգման ցանցի անմխիթար վիճակ
Հողաբաժնի քանակի քչություն
Սոցիալապես ծանր վիճակում գտնվող ընտանիքներ
Ֆինանսական ռեսուրսների բացակայություն
Ծնելիության նվազում

Արտագնա աշխատանքի մեկնողների թվի աճ
Աշխատատեղերի պակաս
Վաղեմությունն անցած շենքերի առկայություն

Համայնքի ուժեղ կողմերն են.

Բանիմաց աշխատուժի առկայություն
Միջնակարգ դպրոցի առկայություն
Բուժկետի առկայություն
Հեռահաղորդակցության առկայություն
Գազաֆիկացման առկայություն
Մարզկենտրոնին մոտ լինելը
Համայնքով անցնող Հայաստան-Վրաստան միջպետական ճանապարհ
Անխափան գործող Բազում-Վանաձոր երթուղի /9 երթ/
Փողոցային լուսավորություն
Աղբահանություն
Բարվոք ներհամայնքային ճանապարհներ
Բարձրագույն կրթությամբ բավարար աշխատուժ

Համայնքի բյուջեն կազմում է 44418,3 մլն դրամ.
որից դոտացիա՝ 24748,6 մլն դրամ
տեղական եկամուտներ՝ 4455,0 մլն դրամ:

Տեղական եկամուտները և կատարողականը ըստ հարկատեսակների

| *Հարկատեսակները* | *Պլանով նախատեսված* | *Կատարվել է* | *%* |
|---|---|---|---|
| Հողի հարկ | 1324,4 | 1333,0 | 101% |
| Գույքահարկ | 2914,7 | 2792,6 | 96% |
| Վարձավճար | 491,1 | 502,3 | 102% |
| Տեղական տուրք | 216,0 | 216,0 | 100% |
| Այլ եկամուտներ | - | 77,0 | - |

Ընդամենը հավաքագրումը կատարվել է 100%

2016թ-ի ընթացքում համայնքի բյուջեի միջոցներով կատարվել է հետևյալ աշխատանքները.
ներհամայնքային ճանապարհների խճապատում
մեկ թաղամասի լուսավորություն
հարազատին կորցրած 10 ընտանիքների տրամադրվել է 300000 դրամ
սոցիալապես անապահով 16 ընտանիքի տրամադրվել է 500000 դրամ
նորածին ունեցած 8 երիտասարդ մայրերի որպես խրախուսանք տրամադրվել է 85000 դրամ

2016թ-ին իմ կողմից կայացվել է 57 որոշում, տրվել է 19 կարգադրություն:
2016թ-ին համայնքի ավագանու կողմից կայացվել է 12 նիստ, 48 որոշում:
Ունենք այնպիսի ծրագրեր որոնք համայնքի բյուջեի միջոցներով հնարավոր չէ իրականացնել:
Խմելու ջրի կենտրոնացված ջրամատակարարում:
Ոռոգման ջրի կենտրոնացված ջրամատակարարում:
Դպրոցի սպորտդահլիճի բացակայություն:

2017-2021թթ համայնքի զարգացման հնգամյա ծրագրով նախատեսված ներհամայնքային ճանապարհների մասնակի բարեկարգումը, հուշարձանների բարեկարգումը և համայնքի էներգետիկ ավան թաղամասի լուսավորությունը նախատեսվում է իրականացնել համայնքի բյուջեի միջոցների հաշվին:

Համայնքի ղեկավար Ս.Հարությունյան